

ՄԵՐ ԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Քիֆիլում գրվում են միմյան խմբագրատան մէջ. Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է 1 է Ք օ ն № 258.

Մասագրութիւնը բայ է առաւօտնան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին 10 կոպեկ. Տ է 1 է Ք օ ն № 258.

Հիմնադրի Գրիգոր ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՄԱՆՆԵՐԻ

Տեղադրանքներ յետոյ.—Ներքին Տեղադրանքներ. Նոր տառեր թուրքերի համար. Չեմ ասի. Նամակ թէօդոսիայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլո-թուրքական պատերազմի հետեւանքները. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ռուս-թիւրքական պատերազմից:

ՏԵՆԻՍԻՆ ԳՐՈՒԹԻՒՆԻՅ ՅԵՏՈՅ

Ձր նայելով այն Հանգամանքին, որ նախ զինքը բարձրանում են վերջին շարժումների ընթացքում, այնու ամենայնև ու նախնային աշխարհում շարունակվում է մի անհասկառն տրամադրութիւն: Ոչ ոք չէ գիտէ, թէ որքան տեղադրանքներ են կուտնեան ներկայ նպատակարար գնորդի արդեք նրանք գարձելու չին փոխելի դէպի վատը և չին իջնի մինչև այն սաստիճան, որին հասել էին նրանք ձեռնարկ ամիսներին: Այդ պատճառով նախնային ընթացքը շատ գորշ են առ այժմ իրանց գործառնութիւնները մէջ, բաւականում են չափաւոր գներով և խոստովում են չափազանց ընդարձակ ծրարդրանքներ:

Նախ զինքը բարձրանալով կախած է խոշոր և յարատեւ պահանջի զարգանալուց: Ռուսաստանի խորքերը դեռ շատ տեղերում նոր-նոր են ծանօթանում նախնային լուսաւորութեան հետ: Ամբողջ զատաններ դեռ լուսաւորվում են ձրազուրի մոմով և նոյն իսկ փայտեայ շինարարով և միայն այժմ են սկսում ծանօթանալ նախնային հետ: Ռուսաստանի գործարանների մի նշանաւոր մասը դեռ գործ է ածում քարէ ածուխ և փայտ, մինչդեռ նախնային կաշոյ մի տայ նրան աւելի է կամ փառելիքը, քան մինչև այժմ գործածվող թիւթերն էին: Նախնային համար, թէ իբրև լուսաւորութեան և թէ իբրև փառելիքի մի թիւթի համար, դեռ զարգացման և տարածման մեծ ասպարէզ կայ ապագայում և և թէ այժմ նախնային փառանքները

վատ դրութեան մէջ է, զա ժամանակաւոր երևոյթ է, որ շուտով կանցնի: Պէտք է նկատել, որ նախնային պահանջի վրա ազդում են արտաքին բերքը և գործարանական արդիւնաբերութիւնը: Առայժմ այն տեղեկութիւնները, որ ստացված են բերքի մասին, նպաստաւոր են և գործարանները կանոնաւոր կերպով շարունակում են իրանց գործունէութիւնը: Եթէ անակնկալ դժբաղդութիւններ տեղի չունենան, պէտք է անտեսական պայմանները նպաստաւոր լինեն նախնային արդիւնաբերութեան համար:

Յամենայն դէպս չը պէտք է մոռանալ, որ անտեսական կանոնաւոր խոշոր փոփոխութիւնները կատարվում են աստիճանաբար և որ յանկարծակի վերջինները առիթ են լինում նոյնպիսի յանկարծական իջնուածքներին: Ուստի չը պէտք է յոյսը դնել պատահականութեան վրա և չը զբաւակնել թույլանկալ բարեշրջումներից, այլ անհրաժեշտ է ծրարդրանքը և ակնկալութիւնները հիմնել չափաւոր և անբարեկեցիկ հաշիւներին վրա: Նախնային արդիւնաբերութիւնը միայն մասնաւոր մի քանի անձանց բարեկեցութեան հարց չէ, այլ և բազմաթիւ մշակների, արհեստագործների և գործակաւորների կնանքի ապահովութեան հարց, ուստի ցանկալի չէ, որ ապագայում ևս նախնային այնպիսի փոփոխութիւններ, որոնց նախնային խարուսիկ ծրարդրանքի և խարուսիկ քայլերից և լարված պայմանների մէջ գործելուց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՌԵՐ ԹՈՒԻՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Պ. Մուհամէդ Եանթախիսիսկին հրատարակել է թուրքերի համար մի նոր ֆոնետիկական այբբենարան, որի համար միայն չնորակալ կառուցել է լինել:

Թուրքերի համար նոր այբբենարանի հարցը նոր չէ. նոյն իսկ մեր հանգուցեայ Աքթունին էլ է գրել այդ մասին եւ այն էլ շատ տարի առաջ: Սակայն մեր հարեւան թուրքերը այդ բանում անշարժ են եւ ոչ մի քայլ դեռ չեն

արել. պ. Եանթախիսկու փորձը հետեւաբար պէտք է շնորհաւորել:

Մեր առաջ է այդ փորձը, որ կրում է «Արեւելեան ֆոնետիկական այբբենարան» անունը: Յայտնի է թէ արաբական գոյութիւն ունեցող տառերը որքան անպատակաբար են ու դժուար ուսանելի երեւակայեցէք այսպիսի մի բան. գրվում է մի բան, որի մէջ բացակայում է ձայնաւոր տառը. այդ տառը ենթադրաբար պէտք է լինի է կամ ի, որը ընթերցողը պէտք է իմանայ մաքից: Այդպէս մի բանը կարող է ունենալ միաժամանակ երեք միտք: Սրան մտ են մասամբ մեր էին, «պատիւ» նշանը կողք բառերը: Բացի այդ, թուրք գրերի մէջ գոյութիւն ունեն եւ անտեսանելի նողաթիւնը (կէտեր), որոնք զբղջով տառերի կամ վերելում եւ կամ ներքեւում որոշում են նրանց հնչիւնները. որովհետեւ բառերի մէջ տառերը անորոշվին չեն գրվում, այլ մի մասով: Ամենամեծ անյարմարութիւնը ահա հենց այդ վերջինն է, որը շատ հեշտ է վերացնելու թիւրքաց տառերի մէջ բացի կէտերից, գոյութիւն ունեն էլի մի քանի դժբեր և կէտեր, որոնք կոչվում են՝ գարաբ, դեր, փուչ, մաթթի, աիֆհաճդա եւ այլն: Թէ որքան այդ անհնշ բարեպիտում եւ նոր սովորող երեխաներին դժուարութեան մէջ են գցում, այդ ամենքին յայտնի է, եւ այդ գրում են իրանք թուրքերը: Մինչդեռ մեզնում մի ամուսն էրեւանի սկսում է մի քանի բառեր կարգաւ եւ գրել, նրանցում ամիսներով հազիւ կարողանում են խղճելը տառերը անցնել: Իսկ անտեսանելի կէտերը եւ զարգանքը ուղղակի շըչմացում են փորքներին: Եթէ մի հնացած գիրք ամուս Ժամանակ բացված լինի եւ գտնվի ծանկնդի տրամադրութեան տակ, գրչի ամբողջ միտքը կը խեղաթիւրվի:

Նոր այբբենարանը, սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, ունի իր շատ անյարմարութիւնները: Պարոն Եանթախիսիսկին պէտք է միանգամից լճոկէր մտնելու կարգաւոր, տառերին Նայա պարոնը պահպանում է աջից դէպի ձախ գրելու սովորական ձեւը. բայց մեզ, այդ բոլորովին անտեղի է: Եթէ կամենում էք վերանորոգութիւն անել, արեք արդէն, ինչպէս պէտք է իմ հարցին՝ թէ արդեօք ձախից դէպի աջ գրելու ակնի լաւ չէր լինի՝ այստեղի ինտելիգենտ

ԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՐԸ

1877 թ. ապրիլին զօրաբաժինը անցնում է սահմանը, Աղդի-Իաղի լեռնաշղթայով ամենադժուար ճանապարհ է կտրում, համարեա անանց պատերազմի գրաւում է Բայազետը եւ թողնելով նրա մէջ մի փոքրիկ բերդապահ զօրք, ուղեւորվում է դէպի արեւմուտք, որպէս զի, համաձայն Աղդի-Մէլիքովի կարգադրութեան, իր վրա գրաւէ Մուխտար-փաշայի ուղադրութիւնը: Մի զարմանալի նախատեսութեամբ Տէր-Ղուկասովը մինչեւնոյն ժամանակ ապահովում է իր զօրաբաժինի կողքը, կապ հաստատելով սահմանի հետ եւ ձեռքում պահելով իր անցած ճանապարհի կէտերը, աչքի առաջ ունենալով թէ գուցէ հարկաւոր կը լինի յետ նահանջելու Պատերազմական տեսակետից այս փայլուն միջոցը միեւնոյն ժամանակ պակասեցնում էր Սերեւանեան անանց այդ էլ փոքրաթիւ զօրաբաժինը. բայց հնազանդ իր պարտականութեան, գնեկերալը համարձակ մտնում է թշնամու երկրի խորքը, աչքի առաջ ունենալով միանալ գլխաւոր բանակի հետ Աղբիլի 29-ին նա գրաւում է սուրբ Յովնանիսը, մայիսի վերջին Այաշ-կերտը, յունիսիսի Իրամ-Իաղի մօտ ջարդում է թիւրքաց զօրաբաժինը եւ աւելի քան 200 վերստ հեռացած է ուսաց սահմանից: Մինչ այս մինչ այն՝ Մուխտար-փաշան հաւաքում է իր գլխաւոր ոյժերը Սերեւանեան զօրաբաժինը օչնչացնելու համար, եւ ահա Իսաբը գերի մտ տեղի է ունենում արիւնահեղ ճակատամարտ, որի մէջ թիւրքերը թուով աւելի քան թիւրքաց զօրաբաժինը եւ աւելի քան 200 վերստ հեռացած է ուսաց սահմանից: Մինչ այս մինչ այն՝ Մուխտար-փաշան հաւաքում է իր գլխաւոր ոյժերը Սերեւանեան զօրաբաժինը օչնչացնելու համար, եւ ահա Իսաբը գերի մտ տեղի է ունենում արիւնահեղ ճակատամարտ, որի մէջ թիւրքերը թուով աւելի քան թիւրքաց զօրաբաժինը եւ աւելի քան 200 վերստ հեռացած է ուսաց սահմանից: Մինչ այս մինչ այն՝ Մուխտար-փաշան հաւաքում է իր գլխաւոր ոյժերը Սերեւանեան զօրաբաժինը օչնչացնելու համար, եւ ահա Իսաբը գերի մտ տեղի է ունենում արիւնահեղ ճակատամարտ, որի մէջ թիւրքերը թուով աւելի քան թիւրքաց զօրաբաժինը եւ աւելի քան 200 վերստ հեռացած է ուսաց սահմանից:

Թուրք երիտասարդները պատասխանեցին գրական կերպով: Եւ իսկապէս արանց միջամտութեամբ պէտք է տարածվի ամեն մի նորութիւն, հետեւապէս ինչ հարկ կայ մի անկախ վերանորոգչի համար դեռ տատանվել եւ ամբողջի քանահնօթեան առաջ զիջանել:

Երկրորդ անյարմարութիւնը տառերի հակագերարուեստական պատկերն է. մի բան, որից զուրկ չեն շատ հին ազգերի տառեր (հայ, վրացի, հրէայ, ասորի): Նոր տառերը, տեղ-տեղ ուղիղ անկիւնով են, տեղ-տեղ սուր անկիւնով, տեղ-տեղ թեք ընկած, կտրու, ծուռ ու մուռ, կնճռոտ, պայտածեւ եւ այլն, որոնց թիւը հասնում է յիսունի: Որքան կարողացած ծանօթանալ նրանց հետ, նրանցից մի քանիսը ուղղակի կարելի էր դուրս գցել ցուցակից, առանց վնասելու լեզուի հարստութեան: Տառերի համար նոր ձեւեր հնարելով, պ. Եանթախիսիսկին, ըստ իս, գործել է մի մեծագոյն սխալ: Ամենքին յայտնի է, որ ազգերը պէտք է ձգտեն ըստ կարելոյն մօտենալ միմեանց, թէ զարգաբանորով, թէ լեզուով եւ այլն, որպէս զի աւելի հեշտ իրազորովի համաձայնեցնել միութեան մեծ գաղափարը. սրա համար էլ գոյութիւն ունեցող միջոցները պէտք է մտնեն իրար նմանվելուն: Ինչու պարոն Եանթախիսիսկին չէ ընդունել արդէն գոյութիւն ունեցող լատինական օրֆօգրաֆիան: ԶԷ որ այդ ամենից հեշտ կը լինէր, եւ նրա մատուցած այդ ծառայութիւնից միջոց կը տրվէր օգտվել եւ մեզ հայերիս: Զիչէ է, լատինական տառերը թուով 50 չեն, բայց պակասը լրացնել նորերով աւելի հեշտ կը լինէր, քան նորեր հնարելը: Բացի այդ լատինական տառերը արդէն այնքան տարածված են, որ շատերի համար հետաքրքրական կը լինէր ծանօթանալ նրանց միջոցով եւ ձեր լեզուի հետ եւ հաւատացած եմ, որ կը զար ժամանակ, որ մենք հայերս եւ վրացիները կը նախանձիք ձեզ:

Պ. Եանթախիսիսկին առաջարկում է մինչեւ չափազանցութիւն է, պէտք է առել: Նորից չնորհաւորելով պարոնի վերանորոգչական առաջին քայլի փորձը, մենք յոյս ենք առածում, որ այդ անաջողութիւնը չի յուսանատեցնի պարոնին: Թիջ նա ձեռնարկէ մի նոր այբբենարանի, միայն չը մոռանայ մեր համեստ

Դրաւելով հաստատուն գիրք Իրամ-Իաղի մօտ, վախեցրած, թէ եւ. բազմաթիւ թշնամու աչքի առաջ, զօրաբաժինը իզուր սպասում էր խոտացված օդնութեան գլխաւոր բանակի կողմից: Իրութիւնը դժուար էր դառնում: Բայց գլխաւոր դժուարութիւնները առջեւում էին: Մեր գլխաւոր բանակի անաջողութիւնները Զիլիսի մօտ փոխեցին գլխաւոր հրամանատարի ծրարդրանքը եւ ահա, այսպիսի դժուար դրութեան մէջ, Տէր-Ղուկասովը սպասելով օդնութեան փոխաբէն ստացաւ հրաման լեռ նահանջելու եւ տեղեկութիւն, թէ գլխաւոր բանակն էլ յետ է նահանջում:

Այսպիսով օդնութեան յոյսը խորտակվում էր: Մամր վշտի զգացմունքը ակամայ դուրս թուա Տէր-Ղուկասովից, որ միշտ ինքնազուսպ էր եւ անխուփ «Շատ եմ եւ կարողացել պատերազմական պատմութիւնները», սասց նա, բայց ոչ մի տեղ չեմ հանդիպել, որ փրկութեան համար նահանջեցին, փրկութեան համար սովորաբար առաջ են արշաւում: Իրութիւնը իսկ որ կրիտիքական, համարեա անկանքի էր դառնում: Առջեւում ուժեղ թշնամի, որ պատրաստ է տրորել զօրաբաժինը, չորս կողմում թշնամի մուսիման աղգաբանակութիւն, կտեւում դժուար ճանապարհ լեռնաշղթաներով եւ կիրճերով, թոյլ կերպով պաշտպանված մի ճանապարհ, Զայիկ-փաշայի բազմաթիւ թիւրք զօրաբաժինը, որ պաշարել էր Բայազետը եւ սպանում էր նահանջման առաջը կտրել, ուղղված թիւրքերի փամփուշտների պակասութիւն, վրաւորվածների մեծ քանակութիւն եւ վերջապէս գաղթական հայերի մի անաղին խուսը (մօտ 3000 հոգի), որոնք իրանց ընտանիքներով եւ կայքով փախչում էին թիւրքական զազանութիւններից:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՌՈՒՄ. ԹԻՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ

I Այաշկերտում

Ինչպէս յայտնի է, 1877 թ. ականի ռուս-թիւրքական պատերազմի քանակական զանազան պատերազմի արդիւնքով օժտվում է Ռուսաստանում Ծպվում են յիշողութիւններ, նշանաւոր դէպքերը յիշատակվում են զանազան հանդէսներով: Յունիսի 2-ին թիւիսի հայոց Վանքի մար կեղեցու բակում հոգեհանգիստ կատարվելը հանդուցեայ գեներալ Արշակ Տէր-Ղուկասովի գերեզմանի վրա, Իրամ-Իաղի եւ Իսաբարի կերտական ճակատամարտի քանակական անկախ արիթմի:

Թէ Տէր-Ղուկասովի անձնաւորութիւնը եւ թէ 1877 թ. յունիսի Այաշկերտում տեղի ունեցած դէպքերի հետաքրքրական նշանակութիւնը հայտնի համար պարտք են գնում մեզ վրա յիշատակել այդ տարեդարը, բերելով գլխաւոր դէպքերի նկարագրութիւնը: Այաշկերտում գործող ռուս բանակի գլխաւոր հրամանատարն էր, ինչպէս յայտնի է, Տէր-Ղուկասով: Ուստի ամենից առաջ տայիս ենք մի յօդուած «Врагская Помощь» ժողովածուից:

1877—1878 թ. ականների ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, արիւնահեղ ճակատում կր-

առաջարկութիւնը նախ թէ նիւթական եւ թէ գործնական տեսակետից նայելով գործին, ընդունէ արդէն գոյութիւն ունեցող լատինական տառերը, աւելցնելով նոյն տիպի նոր պակաս տառերը, երկրորդ՝ անպատճառ ձախից զէպի ալ գրելու ձեւը, երրորդ՝ գոյութիւն ունեցող թւանշանները:

Աւելորդ չեմ համարում յիշատակել, որ այստեղ թէ ինտելիգենտ երիտասարդ թուրքեր եւ թէ մանաւանդ ոչ ինտելիգենտները նորահնար այդ տառերի մասին լսել անգամ չեն ուզում: Բայց նոյն մարդիկ լատինական տառերի ամենապաւ կուսակիցներ են եւ ինձ յայտնեցին, թէ—«Ա», այդ ուրիշ բան է, այդ արդէն պատրաստի կերակուր է, առ եւ տուր ժողովրդին, եւ նա սիրով կուտէ եւ կը մարտէ»:

Բ ա գ ու .

Ձ Ե Մ Տ Ա Յ . . .

Ֆինանսների միջոցով վերականգնելու պահանջները միջոցառումներ են պաշտօնական հայացքը այն մասին, թէ պետութիւնը ինչ չէր պիտի բռնէ երկաթագործութեան ներկայ կրիզիսի վերաբերմամբ, արժէ արձանագրել Ֆրանսոսական վերջին տնտեսաբանութիւնների ժամանակ «Temps»-ի թղթակից Պիէր-Միլլին աղոյժը է տեսակցել հռչակաւոր ֆինանսիստի հետ, որ խօսելով Ռուսաստանի հողատիրութեան սխտանների եւ այդ սխտանների վերաբերեալ կարծիքները մասին ու պապ՝ չը թագնելով, որ ինքը կողմակից է հողատիրութեան անհատական մասնաւոր ձեւին՝ անցնում է երկաթագործութեան կրիզիսին:

«Ռուսաց պետութիւնը, որպէս երկաթուղիներ կառուցող, ամբողջ աշխարհում ամենախոշորն է: Այս հանգամանքը երկաթէ եւ պողպատէ արդիւնագործութեան համար ապահովեցնում է յուսալի եւ կանօնաւոր սպառումն, այն պայմանով, որ այդ արդիւնագործութիւնը որչափ սահմանից չանցնի: Վաղուց արդէն պետութեան պատուէրները տարեցտարի հաւասար քանակութիւններ են կազմում մի բացառութեամբ միայն, երբ այդ քանակութիւնները 10%—15% անուս են ինչին վերաբերել կրիզիսը: Երկաթագործութեան այդ տարիները նրանք էին, երբ նոր գործարանները դեռ եւս չէին գործում, երբ հսկերն էլ իրանց արդիւնագործութիւնը չէին աւելացրել: Բայց շուտով արդիւնագործութիւնը պահանջի սահմանից անցավ: Այժմ ասում են. —ռուսաց կառավարութիւնը մի խոշոր եւ՝ այսպէս ստանձնող գնորդ է, թող նա իր պատուէրների ծաւալն աւելացնէ, ու մինք փրկված կը լինենք: Արդ՝ սկզբունքով ես չեմ աւելացնի, ես համակարծիք եմ Պոլ Լրրուա-Քոլիտի հետ, որին ես ժամանակակից տնտեսագէտներից ամենախելացին եւ ամենամեծն եմ համարում: Կրիզիսի մէջ գտնվող արդիւնագործութիւնը նման է շատ

կերած մարդուն. միակ բժշկութիւնը դիէտան է: Ես սակայն կը պահանջեմ չափը կառուցող գծերի պահանջը մնում է նոյնը. ես նոյն իսկ կարծում եմ, որ պատուէրները տաս տոկոսաչափ կաճին: Ես կարող էի այդ պատուէրները շատ աւելացնել, ու ես ժողովրդականութիւն կը ստանայի. ինձ համար գովասանքներ կերպէին, մեծ մարդ կը հռչակվի ես, այս բոլորից յետոյ գործերը կը յանձնի յաջորդիս, որ փոստի դուրս գալու համար պիտի տանվէր: Ես երաժարուած եմ. —մի այդպիսի ստոր վարմունք ես չեմ թող տայ: Օգնիր ինքը թեք, եւ երկինքը թեք կօզնէ: Արդիւնագործութիւնը իր կողմից պիտի գործէ: Նա իր առջ ունի 140 միլիոն ռուսներ, որոնց հարկաւոր են բահեր, գուլթաններ, կաթամներ ու առօրեայ կեանքի համար անհրաժեշտ անթիւ մանր իրեղեններ, թող այս ամենը արդիւնագործեն եւ վաճառեն Այն, ես գիտեմ, որ աւելի յարմար է միանգամից 100 միլիոն տոնն երկաթ ծախել, բայց միայն պետութեանը դիմելը, միայն պետութեան վրա յոյս դնելը տնտեսական սխալ է: Ամենայնուայի գնորդը պարոն Ող-Աչխարն է»:

«Ձեռն թագնում, շարունակեց միջոցառում, որ պարոն Ող-Աչխարը, այսինքն ուս պիւրազիցն պիտի գնել կարողանայ: Ահա թէ ինչու դուք իրաւունք ունեւիք մեր այդ խօսակցութեան հէնց սկզբում շոյափելու հողատիրութեան վերաբերեալ օրէնքների բարեփոխութեան անհրաժեշտութեան հարցը: Պէտք է աւելացնել ուս հնարագործ նիւթական միջոցները, պիտի նրան հնարաւորութիւն տայ այդ միջոցներն աւելացնելու. ու եթէ հարցն այսօր լուծուին չի ստանայ, տաս-քսան տարվայ մէջ նա հանդէս կը գայ աւելի սաստկութեամբ»:

Գ. Տէր-Ղեւոնդեան

Թ ի Ֆ լ ի ս .

ՆԱՄԱԿ ԹԷՕՂՈՍԻՅՈՒՆԻՑ

Մայիսի 27-ին

Մայիսի 26-ին Թէօդոսիայի հայոց ծխական ուսումնարանում տեղի ունեցաւ տեղիս եկեղեցիների երէցիների ընտրութիւնը: Պէտք է նկատել, որ Թէօդոսիայի հայերը հասարակական ոչ մի հարցով չեն հետաքրքրվում, եթէ մէջը անձնական օգուտ չը կայ... Այս անգամ, երեւի եկեղեցիների նիւթական բարւոք վիճակը աչքի առաջ ունենալով, հետաքրքրվել էին եւ գործունէ, այս եւ այն դեմից, նոյն իսկ կարմիր-սպիտակները եւս ինչին վերաբերել կրիզիսը այս անգամ քստ օրինակ էր լինելու: Գաղտնի ջուէրակութեամբ, բայց, ի զարմանս շատերի, տեղի ունեցաւ առանց տուփերի ժողովը սկսվելուն պէս, ժողովականները շնորհակալութիւն յայտնեցին նախկին երէցիս պ. Կ. Արուծեանին: Նրա վեցամսյա ծառայութեան համար եւ ապա, աչքի առաջ ունենալով պարոնի երկարամեայ արդիւնաւէտ ծառայութիւնը

նեցին այդ հերոսական, կառկական նահանջման դիմաց, որ կատարվեց զարմանալի կործանութեան եւ օրինակելի կարգով: Այս մեծագործութեան պատիւը ամբողջովին պատկանում է Տէր-Ղեւոնդեանին, որ ազատեց 6-հազարանոց բանակը եւ երեք հազար անպաշտպան զորթակաւները:

Ծանօթանալով այս արշաւանքի պատուութեան, ընթերցողը, որ նոյն իսկ կատարելապէս անձանթ է պատերազմական գործողութիւնների պայմանների հետ, համոզվում է, որ Տէր-Ղեւոնդեանը պատերազմական փայլուն ընդունակութիւններ ունէր:

Օրինակի համար կանգ առնեք նահանջման վերջին օրվայ վրա:

Անդադար առաջ շարժվելով զէպի ուսաց սահմանը տանող ճանապարհով, Երեւանի զօրաբաժինը ընկնում է Դարակի հովիտը, որ ներկայացնում է չորս կողմից լեռնային բարձրութիւններով շրջապատված մի բարձրաւանդակ. առջեւուս Դարակի լեռնային բարձրանցքն է, որը պէտք էր անցնել մի չը մշակված ճանապարհով: Այս իսկ խորհրդովի մէջ, անհրաժեշտութիւնից ստիպված՝ առաջաւոր ժայռերին էր սեղմվել զօրաբաժինը: Իսկ թիւքաց զօրքերը, աւելի եւս շատ ուժեղացրած, հետեւում էին քայլ առ քայլ եւ կարողացան գրաւել ուսաց զօրքի թեւերի վրա գտնվող բարձրութիւնները: Յունիսի 21-ի ամբողջ երեկոն եւ գիշերը զօրաբաժինը մնաց այդ քարհովտի մէջ: Դեռ չէին կարողացել զօրքերը գիշերվայ հանգստութեան համար տեղ պատրաստել իրանց համար, երբ թիւքերը սկսեցին ետեւից աւելի եւ աւելի նեղել Գեներալ Տէր-Ղեւոնդեանի

եւ երէցիտական հմտութիւնը, նորից միաձայն ընտրեցին նրան, յուսալով, որ պ. Արուծեանը նոր եռամսակին կընդարձակէ իր գործունէութիւնը եւ հիմնաւոր փոփոխութիւններ մտցնելով տեղիս ծխական ուսումնարանում, կը լաւացնէ զարգի ներկայ անսխալանելի վիճակը, մասնաւոր չորստով Թէօդոսիայի եկեղեցիների մուտքը, հանգուցեալ Յ. Այվազովսկու թողած զառաջվից ստացած տոկոսով, բոլորովին պահով զրութեան է հասնելու...:

Ներքին գործերի միջնորդութիւնը թոյլատրեց Թէօդոսիայի հայ համայնքին ունենալ աղքատախնամ հողաբարձութիւն կայացաւ հողաբարձական ընտրութիւնը եւ աղոյժ հողաբարձութեան անդամները դիւրով մարդիկ են եւ գլխաւորապէս ինտելիգենտ, բայց անփորձ... Կարծում ենք, պ. պ. հողաբարձուները, ստանձնելով այսպիսի մի պաշտօն, կը գտնեն միջոցներ կատարածելու իրանց վրա դրած պարտականութիւնը, բաւական է միայն սիրել գործը եւ ունենալ եռանդ:

Բերբերեանի կտակը... Թողած ազգին..

Չը նայելով հանգուցեալի մահվանից անցած ութ տարիներին, ոչ միայն թողած զուժարը (կարւածները) ոչ մի կօշկով չէ աւելացրել, այլ եւ նորերս կտակաւորաներից պ. Սեփիանանի ցոյց տուած հաշուով, մինչեւ 1902 թի յունվարի մէկը, պարտք կայ 12 հազար ռուբլի, որ դեռ շատ երկար պիտի մնայ, որովհետեւ կարւածների եղքն ու մուտքը իրար չեն ծածկում: Եւ այսուհետեւ զէֆիցիտը անհրաժեշտ է լինելու Առանց մաւրախանութիւնների մէջ մտնելու, առ այժմ կարող եմք ասել, որ Բերբերեանի կտակը իր մէջ պարունակած ցանկութիւններով կը մնայ լրիկ մեռած տառ, որովհետեւ զէֆիցիտները կազմելու են պատկառելի գումար... Միակ միջիթարակաւոր Թէօդոսիայի հայ աղքատների ստացած 300 ռ. ղորմութիւնն է, որ տրվում է իւրաքանչիւր տարի: Ահա թէ ինչ կէտն են հասնում այս եւ նոյնանման կտակները, որոնք թողնելով երեւիող ներկան, մութ ապագան են իրը թէ ապահովում:

Ս. Խանյան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, յունիսի 4-ին

Մայիսի 25-ին այստեղի հայ եւ վրացի թատերասերները միացած Ներկայացրին, երկրորդ անգամ, վրացերէն լեզուով «Պարիզի աղքատների» պիէսան, որի զուտ արդիւնքի մի երրորդ մասը, համաձայն հայ թատերասերների առաջարկութեան, յատկացվեց Կարա-Մուրզայի երգերը հրատարակելու գործին: Դժբաղդաբար, մուտքը շատ քիչ էր: Ընդամենը 123 ռ., այն էլ ժողովրդական է ժամացրած գնելով, որից ծախսը հանձնել մնաց զուտ արդիւնք 33 ռ., 45 կ., որի մի երրորդ մասը, 11 ռուբլի, այժմ ուղարկոււմ ենք յարգելի խմբագրութեանդ:

Ա. Տ. Գ.—

սովը տեղաւորում է իր զօրքերը: Հասու գիշերը: Երջակայ բարձրութիւնների վրա մի անհայն օղակի պէս վառվեցին թշնամու գիշերային կրակները: Անկայտ էր, որ թիւքերը կամենում էին շրջապատել եւ փակել զօրաբաժինը այս քարհովտի մէջ: Դրութեան վրատանքը գրում էին ամենքը, զգում էր նաեւ զօրաբաժնի հրամանատարը, բայց արտաբնուստ առաջվայ պէս մնում էր հանգարտ, նա միայն կարգադրեց, թէ ում պիտի անցնէ հրամանատարութիւնը, եթէ ինքը մեռնէ: Ամբողջ գիշերը կատարվում էին հետախուզութիւններ, որոնք պարզում էին թշնամու բռնած դիրքը: Վճռված էր դեռ գիշերը զբաւել զօրքերի մի փոքր մասով լեռնային անցքի տեւումեան կողմում: Գտնվող բարձրութիւնները, որպէս զի այդպիսով արգելվի թշնամու շրջապատել զօրաբաժինը այդ կողմից: Երեւանեան զօրաբաժնին հարկաւոր էր դուրս գալ իր աննպաստ դրութիւնից, իսկ դրա համար ամենից առաջ պէտք էր, օգտվելով գիշերվայ մթնութիւնից, բարձրացնել իր պոչը (ճանրոցը, վերաւորված ներքին եւ գաղթականներին) սարի գլուխը եւ իջնելով Միսանի հովիտը, մի եւ նոյն ժամանակ ապահովելով իրան թեւերի կողմից եւ դիւմարելով թշնամու առաջնախուշու: Այս նպատակով զօրաբաժինը, Տէր-Ղեւոնդեանի կարգադրութեամբ, գործում էր միաժամանակ երեք խմբերով: զօրաբաժնի առաջին խումբը, ծանաւոր զօրքեր եւ գաղթականներից առաջ անցնելով, մարտ է եւ ապահովում է ճանապարհը, եւ մի եւ նոյն ժամանակ հսկում է թեւերի ապահովութեան վրա: Երկրորդ, կենտրոնական խումբը պահպանում է լեռնային անցքը եւ զբաւելով անցքը, վերջապահ մասի նահանջման

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք 1) Ալէքսանդր Կարապետից 2 ռ., Աղամեանից 1 ռ., 2) Բաթումից 2 ռ., Տ—Գի միջոցով 11 ռ., որ գոյացել է մի ներկայացումից (տես նամակ խմբագրութեան) եւ 3) օր. Վեներայից Թի Ֆլիսում 45 կոպէկ, ընդամենը 14 ռ. 45 կ., որ նախկին ժողովաների հետ միասին անուս է 806 ռուբլի:

Թիֆլիսի քաղաքային դուժման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, յունիսի 5-ին, որոյց Պուչկինեան ժողովրդական գրադարանի համար, որ պէտք է գեներալի Ալէքսանդրեան այդուս, յատկացնել 8000 ռուբլի եւ վարչութեան անդամ Խորոսովի թաղման ծախքերը թեթեւացնելու նպատակով՝ տալ ընտանիքին օժանդակութիւն 600 ռուբլի:

«Правительственный Вѣстникъ» լրագրում սպառված է: «Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետը ինչդեպ էր Նորին կայսերական Մեծութեան հանձնարարութեան լեւալ միջոցները գործարկութեան համար, որոնք վերաբերում են Ծամախի քաղաքի վարչութեան եւ քաղաքային տնտեսութեան...» տալ կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետին իրաւունք վերջնականապէս բժելու այն հարցերն եւ գործարկելու այն ժողովները, որոնք կայ ունեն 1902 թւական յունվարի 31-ի երկարաւորից վաճառված Ծամախի քաղաքը եւ նրա չըփակայ գիւղերը վերանորոգելու եւ կարգաւորելու հետ: 2) զարգրեցնել ժամանակաւորապէս Ծամախի քաղաքում 1892 թւականի քաղաքային կանօնադրութեան գործարկութիւնը: 3) վերացնել այժմ այնտեղ գոյութիւն ունեցող հասարակական վարչութիւնը: 4) յանձնել ժամանակաւորապէս քաղաքային տնտեսական գործերը Ծամախու զոււարական ոստիկանական վարչութեան քաղաքի հասարակութեան կողմից ընտրված երկու ղէպուտատների մասնակցութեամբ: 5) տալ կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետին իրաւունք վերականգնելու 1902 թւականի քաղաքային կանօնադրութեան գործարկութիւնը, երբ նա այդ բանը յարմար կը համարէ: 6) աղատել Ծամախի քաղաքը պետական գանձարանի վճարելիք տուրքերի հատուցումից՝ ոստիկանութեան պահպանութեան համար եւ զինուորական բնակարանային հարկի ծախքերից ու ընդունել այդ ծախքերը ի հաշիւ պետական գանձարանի, մինչեւ որ այնտեղ վերականգնվի հասարակական վարչութեան գործունէութիւնը: Այս մասին կովկասեան կառավարչապետի կողմից մատուցված զեկուսման իսկական վրա Նորին կայսերական Մեծութիւնը բարեհաճել է մակագրել: «Համաձայն են»:

ճանապարհն է ապահովում: Երբ սկսեց լուսանալ, զօրաբաժնի ամբողջ ծանրոցը արդէն բարձրացել էր լեռնային անցքի գլուխը, իսկ քարահովտում մնացած վերջապահ մասը կանգնած էր ուղղական կարգով Տէր-Ղեւոնդեանը զասուրբել էր նրան ճարտարութեամբ: Օրը բացվելուն պէս թիւքերը կրակ բաց արին, եւ միաժամանակ փորձում էին շրջապատել մեզ թեւերից: Բայց այդ փորձերը ժամանակին յետ մղվեցին, իսկ վերջապահ մասը, արձակելով իր վերջին փամփուշտները, պահուստ էր թշնամու յարձակումները: Հէնց որ թշնամութեան վերջին սայլերը բարձրացան լեռնային անցքի գլուխը, սկսվեց վերջապահ զօրքի նահանջումը: Ուղղական կատարելա կարգով, հանգիստ, թշնամութեան պատասխանութեան տակ Առաւուսեան 10 ժամի մտ վերջապահ զօրքի վերջին մասերը սկսեցին հանգարտ գնալ զէպի լեռնային անցքը: Վտանգը սակայն, դեռ շատ մեծ էր, որովհետեւ թշնամի 12-ի ժող ծանրոցը արդէն իջաւ Միսանի հովիտը եւ համարեա անվտանգ տեղ էր դրան հոսում, իսկ զօրաբաժինը, որի շարժումը այժմ աւելի քիչ էր նեղ պայմանների մէջ զբաւած, քաղութեամբ յետ էր մղում զանազան կողմերից արշաւող թշնամուն: Եւ արձակելով իր վերջին փամփուշտները, ժամի 3-ին իջաւ Միսանի հովիտը, ազատվելով թիւքերի հալածումից: Այստեղ զօրաբաժինը արդէն զգում էր իրան համարեա կատարելա ապահովութեան մէջ: Ահա ինչ գործարկութեան մէջ էր ընկնում զօրաբաժինը:

(Կը շարունակվի)



